ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՆԵՐԴՐՈՒՄ

Բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը մի նոր անակնկալ ներկայացրեց գրական աշխարհին: Դա «Արտեմ Հարությունյանի պոեզիան» ուսումնասիրությունն է, որը վաստակաշատ գիտնականի երկար տարիների աշխատանքի արդյունքն է, քանզի ուսումնասիրության օբյեկտը մի այնպիսի բանաստեղծի ամբողջական ստեղծագործությունն է, որպիսին Արտեմ Հարությունյանն է՝ Հայաստանի Հանրապետության պետական ու միջազգային մի քանի մրցանակների դափնեկիր, 20-րդ դարի երկրորդ կեսի և ժամանակակից հայ պոեզիայի աստղերից մեկը: Տեղին է նշել և այն, որ ԱՄՆ-ում Ա. Հարությունյանի անգլերեն թարգմանված «Նամակ Նոյին» ժողովածուն ամերիկյան մի շարք համալսարաններ ներկայացրել են նոբելյան մրցանակի: Ընդգծենք նաև, որ անվանի բանաստեղծը շարունակում է իր բեղմնավոր գրչով ոչ միայն հարստացնել արդի հայ պոեզիան, այլև հայոց պոետական խոսքը հրամցնել աշխարհին: Այստեղից էլ այն պատասխանատվությունն ու պոեզիայի փիլիսոփայության խորքային իմացությունը, որ անհրաժեշտ է եղել նման գեղագետի ստեղծագործությունը դիտարկելու, վերլուծելու և ըստ էության արժեքավորելու համար: Ս. Խանյանը ստեղծագործական ու գրականագիտական հարուստ փորձի շնորհիվ հասել է իր նպատակին՝ համահայկական մշակութային մերօրյա գանձարանին ներկայացնելով այնպիսի հետազոտություն, որ մի կողմից՝ արժանի է ուսումնասիրվող հեղինակի գրական հունձքին, մյուս կողմից՝ ուսումնասիրության հեղինակի գրական հայացքների հարստությանն ու թարմությանը:

Գրքի մուտքում Ս. Խանյանը հպարտությամբ է ներկայացնում Արտեմ Հարությունյանի հորը՝ Արցախ աշխարհի արժանի զավակ, նշանավոր բանաստեղծ Միքայել Հարությունյանին, ընդգծում հոր և որդու ստեղծագործական խաչնվածքները՝ մատնանշելով, որ Մ. Հարությունյանը շարունակում էր Տերյան-Շիրազ ուղեծիրը, իսկ Ա. Հարությունյանը՝ Չարենց-Սևակ-Ուիթմեն-Էլիոթ ճանապարհը: Այսինքն՝ ինչպես գրում է Խանյանը, 1960-1970-ական թվականների հայ երիտասարդական պոեզիան շարունակում էր զարգանալ երկու ուղիով՝ հանձինս դասական ավանդների տաղանդաշատ առաքյալ Համո Սահյանի և դասականի սահմաններից անդին թռիչք ապրող Պարույր Սևակի: Այս հակադրությունը, սակայն, չէր խանգարում, որ շարունակվի հայոց ազգային պոեզիայի թեմատիկ-գաղափարական հագեցվածությունը:

Ս. Խանյանը ճիշտ է նկատում, որ երկու դեպքում էլ արծարծվում էին մեր ժողովրդի ճակատագրի հետ սերտորեն կապված հիմնախնդիրները, նրա նորօրյա ակնկալիքներն ու հուսախաբությունները, կամքի ուժն ու հոգու գեղեցկությունը: Երկու դեպքում էլ գրողներին հուզում էր գրականության լավագույն ավանդների հարցը՝ երբեք չմոռանալով, որ պոեզիան պատկերավոր մտածողություն է:

Հայ պոեզիայի զարգացման ընդհանուր ուղեգծի վրա գրականագետը գրքի առաջին՝ «Եռաստիճան թռիչք դեպի պոեզիայի բարձունքներ» գլխում վերլուծական-մեթոդական հիմունքներով գնահատում է Ա. Հարությունյանի առաջին երեք ժողվածները, քննարկում ժամանակին այդ գրքերի մասին հրատարակված գրախոսությունները և ընդգծում. «Ա.Հարությունյանը «Նշանների երկիր», «Տեսադաշտ», «Շեմ» ժողովածուներով կատարեց եռաստիճան իր թռիչքը դեպի լայն ճանաչում բերող «Նամակ Նոյին» հրաշապատումը» (Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, Ստեփ., 2014, էջ 47):

Ուսումնասիրության երկրորդ գլուխը նվիրված է «Նամակ Նոյին» գրքի վերլուծական գնահատմանը: Ս. Խանյանը նշում է, որ այս ժողվածուն լայն արձագանք է գտել ոչ միայն հայ, այլև օտարազգի գրաքննադատների շրջանում և արժանացել ՀՀ պետական մրցանակի: Նա այստեղ բերում է ականավոր գրականագետ, ակադեմիկոս Ս. Սարինյանի, ամերիկացի բանաստեղծ Հեյդն Գերութի, ամերիկահայ գրող Փիթըր Պալաքյանի, անվանի գրաքննադատ Երվանդ Ազատյանի, գրականագետ Ալ. Թուփչյանի և ուրիշ ճանաչված գործիչների բարձր կարծիքները, միաժամանակ արտահայտում իր սեփական կարծիքը՝ առնչված նման վերաբերմունքի հետ: «Նման գնահատականը,- գրում է Ս. Խանյանը,- պատահական չէ, որովհետև Արտեմը խորապես յուրացրել է համաշխարհային գրականության լավագույն ավանդոյթները, դրանք օծել հայ դասական և ժամանակակից պոեզիայի ոսկեփոշով, իր հոգու շերտերում դարձրել ծիածան և ընթերցողին ներկայացրել որպես յուրատիպ մի գոբելեն: Տիրապետելով անգլերենին, գերմաներենին, ֆրանսերենին, ռուսերենին՝ նա ըմբոշխնել է աշխարհի մեծերի գրական արժեքները և աստվածանվեր իր տաղանդի ու արցախածին տքնանքի շնորհիվ ներկայացրել միանգամայն ինքնատիպ խոսքով»:

Այս դիտարկումից հետո Ս. Խանյանը բերում է ԱՄՆ «Ռաֆթ» ամսագրի խմբագիր, Քլիվլենդի համալսարանի լեզվաբանության և գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ջոն Գրեփինի անմիջական խոսքը. «Արտեմ Հարությունյանն այն բանաստեղծն է, որին միայն ինքը կարող է իշխել և ղեկավարել, միայն ինքը: Եվ նրա բանաստեղծական տեսիլքն իրական է, «մարդասիրական» (Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, էջ 50):

Հետաքրքիր նրբանկատությամբ Ս. Խանյանը ընթերցողին մատուցում է մի առեղծված՝ սերտորեն միահյուսված անցյալի և արդի գրական խմորումների հետ, որը հնարավորություն է տալիս լրիվ ընկալելու Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» ժողովածուի և՛ մտահղացումը, և՛ գեղագիտական իդեալի խորությունն ու սահմանները: «Համաշխարհային գրականության մեջ,- գրում է Խանյանը,- հայտնի են մի շարք մեծություններ, որոնք իրենց դարաշրջանների իրական պատկերը ներկայացնելու համար դիմել են Աստծուն՝ նրանից հայցելով օգնություն՝ մարդկանց մեղքերը քավելու, չար ու ազահ անհատներին դարձի բերելու, ազգամիջյան ընդհարումների առաջն առնելու, սոցիալական պատշաճ արդարություն հաստատելու միտումով: Այս առումով հատկանշական է նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ պոեմը, որն արդեն հնչում է աշխարհի շատ լեզուներով: Արտեմ Հարությունյանն իր գեղագիտական իդեալի հրամայականով դիմել է ոչ թե Տիրոջը, այլ Նոյին: Ինչո՞ւ Նոյին: Գրա-

կանագետն անմիջապես բերում է ինչու-ի համոզիչ պատասխանը. «Ա. Հարությունյանը, ելնելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, բարոյահոգեբանական խմորումներից, եկել է եզրակացության, որ Աստծո ստեղծած աշխարհն աղտոտված է, վտանգված, մարդկությունը ծուռ ճանապարհի վրա է, այն փրկել է պետք, իսկ Աստծո արարածների առաջին փրկիչը եղել է աստվածաշնչյան առասպելի հերոս Նոյը, որը կարողացել է Աստծո հրաշքը փրկել ջրհեղեղից: Բացի դրանից, Նոյ նահապետի աշխարհափրկիչ խիզախությունը կապված է Արարատ սարի հետ, որ բանաստեղծի ավանդական հայրենիքի խորհրդանիշն է: Այստեղից էլ այն անմիջական սրտացավությունը, որ Հարությունյանը գեղարվեստական փայլուն հնարանքներով ընդգծել է պոեմում: Դա, հիրավի, սովորական պոեմ չէ, այլ տագնապից, ցավից, հույսից ծնված մի ստեղծագործություն, որ խոսում է մարդկության անունից, Աստծո սիրով՝ հանուն նրա հրաշագործության հավերժական տրոփի» (Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, էջ 50-51):

Այս հետաքրքիր դիտարկումից հետո Ս. Խանյանը եզրակացնում է, որ Ա. Հարությունյանը դիմել է Նոյին՝ որպես Փրկչի մի կողմից՝ նկատի ունենալով աշխարհի ծուռն ու թերին, մյուս կողմից՝ իր ժողովրդի, նրա պատմական մի մասը կազմող իր ծննդավայր Արցախի ճակատագիրը: Եվ նա ճիշտ է ընդգծում, որ արդյունքում պոեմը վերածվել է համամարդկային ցավի ու պոետի՝ սեփական ժողովրդի ազգային տագնապի գեղարվեստական խնդրագրի, որի արժեքն ընդհանրական ու բարձր է ռեալիստական սերուցքի և գեղարվեստական երանգավորման շնորհիվ:

Պոեմի հանգամանալից ուսումնասիրությունը հնարավորություն է տվել Ս. Խանյանին լրիվ խորանալու այդ բազմակնճիռ ստեղծագործության ենթատեքստի շերտերի մեջ, նկատելու նաև բանաստեղծի անհուն սերն ու հույսերը՝ կապված Արցախյան ազգային-ազատագրական պայքարի հետ:

Խանյանը ներառել է նաև պոեմի սյուժետային այն գիծը, որ առնչված է 1915թ. Հայոց մեծ եղեռնին, որտեղ հաղինակը խարազանում է Օսմանյան Թուրքիայի մարդակեր իշխողներին, որոնց ժառանգորդները ճիգ ու ջանք չեն խնայում ժխտելու իրենց նախորդների հանցագործությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև մարդկության հանդեպ:

Պոեմի թեմատիկ-գաղափարական հարուստ հիմքից ու գեղարվեստական թարմ առանձնահատկություններից ելնելով՝ Ս. Խանյանն ընդհանրացնում է. «Ա Հարությունյանի «Նամակ Նոյին» պոեմն իր ազգային-համամարդկային անցած-ներկա ցավերի ու տագնապների, կորուստների ու ակնկալիքների ինքնատիպ ու հզոր մի պատկեր է, որի արժեքը միշտ դեպի իրեն է ձգելու գալիք սերունդներին» (Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, էջ 60):

Աշխատության հեղինակը դիտարկել ու գնահատել է «Նամակ Նոյին» ժողովածուի բոլոր այն ստեղծագործությունները, որոնք ընդհանրության մեջ մի շարք են կազմում՝ ներկայացնելով հայ ժողովրդի պատմական անցյալը, մերօրյա Հայաստանն ու մարտնչող Արցախն աշխարհի բարդ խաչմերուկների և իրադարձությունների խառնարանում:

Գրքի երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Ա. Հարությունյանի «Հուդայի արձակուրդը» ժողովածուի վերլուծությանն ու արժեքավորմանը: Այստեղ հենց սկզբում Խանյանը ստեղծագործող գրականագետի պատկերավոր խոսքով ընդգծում է, որ ժողովածուն, որի վերնագիրը վերցված է նրանում զետեղված համանուն պոեմից, հայոց տաղանդավոր բանաստեղծի կռիվն է ինքն իր հետ, ծուռ ընթացող աշխարհի, աղտոտված կյանքի, ազգային ծանր ճակատագրի, մարդկության աղետաբեր անտարբե-

ության և այն ամենի հետ, ինչն Աստվածակերտ ու Աստվածապատկեր մարդուն տանում է դեպի մեղքերի ծով, որից մաքրվելու համար այլևս անուժ է ապաշխարանքը, իսկ վերինն անտարբեր է, որովհետև նա էլ դժգոհ է իր արարած աշխարհի գլուխգործոց մարդուց, որ փոխանակ նեցուկ դառնալու իր նմանին, ընդհակառակը՝ գրկախառնվում է Հուդային ու հպարտանում սատանայական հմտությամբ ու խաբեությամբ:

Ս. Խանյանը նշում է, որ «Նամակ Նոյին» և «Հուդայի արձակուրդը» ժողովածուներով Արտեմ Հարությունյանը դարձավ քաղաքական պոեզիայի հսկաներից մեկը հայ իրականության մեջ՝ թիկունքում ունենալով Մ. Նալբանյանի, Ե. Չարենցի ու Պ. Սևակի փորձը, սակայն գեղագիտական նոր ընկալումներով ու մտածողության թարմ պատկերավորությամբ: Որպես իր այս դիտարկումի հաստատում՝ Ս. Խանյանը բերում է հայ և օտար գրաքննադատների դրվատանքի խոսքերից, իհարկե, ընդգծելով իր սեփական կարծիքը, որը համեմված է գնահատման գրականագիտական լուրջ դիտարկումներով:

«Հուդայի արձակուրդը» պոեմի թեման առնված է 1991 թվականին Հայաստանի անկախացումից հետո տեղի ունեցած հակասական իրադարձությունների խառնարանից: Ս. Խանյանի ուշադրության կենտրոնում պոեմի այն մասերն են, որոնցում բանաստեղծը, չհաշտվելով Հայաստանի անկախությունից հետո անմիջապես տեղի ունեցած անարդարությունների հետ, ուղղակի ըմբոստանում է քաղաքական այն ղեկավարների դեմ, ովքեր գրկախառնվելով Հուդայի հետ, իրենք իսկ դառնում են հուդաներ՝ մոռանալով երկրի և ժողովրդի շահերը:

Ս. Խանյանը, անդրադառնալով «Հուդայի արձակուրդը» ժողովածուի պատկերներին, նշում է, որ բանաստեղծ Ա. Հարությունյանի ցավը երկակունք է՝ Հայաստանն է և Արցախը: Համոզիչ վերլուծություններից հետո Ս Խանյանը մատնանշում է. «Հուդայի արձակուրդը» պոեմը յուրովի մի լուսարձակ է նկարագրվող ժամանակաշրջանի քաղաքական-սոցիալական հարաբերություններն ի ցույց դնելու ուղղությամբ»:

«Հուդայի արձակուրդը» ժողովածուում համանուն պոեմի մոտ զետեղված են բանաստեղծությունների նոր շարքեր, որոնք վերլուծվում ու գնահատվում են Ս. Խանյանի աշխատության մեջ: Նշվում է այն երևույթը, որ հատուկ է Հարությունյանի պոեզիային, ասել է թե՝ նա չի հաշտվում քաղաքական այն կուսակցությունների ու գործիչների հետ, ում համար ազգային ճակատագիրը վերածվում է խաղաքարտի՝ ի շահ իրենց անիմաստ ձգտումների: Ս. Խանյանն այստեղ ընդհանրացնում է. «Ա Հարությունյանը պետական մտածողություն ունեցող, պետականամետ բանաստեղծ է՝ քաղաքացիական ազնիվ զգացողությամբ ու երազով: Պետք է վերացնել «մաֆիայի» խմբերը, չպետք է սնել պետական գողերին, պետք է զարգացնել տնտեսությունը, պետք է լուսավորել հորիզոնները, վերացնել աղքատությունը, պետք է մարտնչել Հայոց ցեղասպանության ճանաչման համար» (Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, էջ 94-96): Հայ ընթերցողները, ջերմորեն ընդունելով Ա. Հարությունյանի վերոնշյալ ժողովածուները, սպասում էին նրա նոր խոսքին: Եվ եկավ պահը՝ տաղանդավոր բանաստեղծը նրանց ընծայեց իր նոր գիրքը՝ «Հեռուստապոեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» խոսուն խորագրով: Աշխատության չորրորդ գլխում Ս. Խանյանը գրաքննադատական հարուստ փորձի ու գրական հայացքների նոր երանգներով բացահայտում է ստվարածավալ այդ ժողովածուի բերած նորությունն ու գրողի տաղանդի նոր փայլատակումները: Ժամանակին ժողովածուի մասին «Գրական թերթը» հրապարակել է Խանյանի ծավալուն գրախոսությունը: Կրկին անդրադառնալով Հարությունյանի պոետական այս նորահայտ հունձքին՝ աշխատության հեղինակը նշում է, որ ընթերցողը, կարդալով նոր ժողովածուն, դառնում է մեր ազգային անանցանելի ցա-

վի անմնացորդ կրողը, իրեն համարում է այն մարտիկը, ով Արցախում փրկել է 1915-ի ցեղասպանությունից հետո մեր երերված ազգային արժանապատվությունը, միանում է այն զինվորներին, ովքեր պաշտպանում են մեր երկու հայկական հանրապետությունների սահմանները մեր արյան դարավոր թշնամուց… Միաժամանակ կոչ է անում նավթի ու գազի շահութաբեր հոսքից խլացած հզոր տերություններին, որ ճանաչեն Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությունը՝ հանուն մարդկության անվտանգ ապագայի:

Ս. Խանյանը հաստատում է, որ Ա. Հարությունյանը դարձել է մեր ժամանակի պատգամախոսը՝ տագնապած աշխարհի ուղիղ ծիրից դուրս մղված մարդկության ճակատագրի համար:

Հանգամանալից լուսաբանելով ժողովածուում ընդգրկված ստեղծագործությունները՝ Ս. Խանյանը գրում է. «Ա. Հարությունյանի այս նոր ժողովածուն նոր գյուտերի, հանուն արդարացի ու բարվոք կենսամակարդակի մաքառող ոգու, Հայաստանի և աշխարհասփյուռ հայ ժողովրդի՝ 20-րդ դարում կրած տառապանքների և հույսի հրավառությունների չափածո զրուցարան-ուլունքաշար է: Նրանում արտացոլում են գտել պետությունների և ազգերի, ժողովրդական լայն զանգվածների ու անհատների մաքրվելու կարիքն զգացող փոխհարաբերությունները, որոնց խաչմերուկներում հառնում է հայ ժողովրդի տառապած-վերածնված, մաքառող-հուսավառ կերպարը, որի ձայնը, հնչում է «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից՝ հանուն կատարյալ մարդու, արդարամիտ պետության, խայտաբղետ ազգերի համերաշխության, աստվածային սիրո ծավալման, մարդկային խղճի արթնացման, Հայոց ցեղասպանության ճանաչման, արժանի դատաստանի կայացման» (Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, էջ 111):

Անահիտ ԱԹԱՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր